Կոնդակ օրհնութեան Ղարսի Տ. Մինաս աւագ քհնյ. Տէր Պետրոսեանի անունով Ղարսի Նորակառոյց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու շինութեան աջակցութիւն ցոյց տալու համար, ըստ միջնորդութեան Երեւանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսի։ 27 նոյեմբերի, թ. 2135։

Նորին Սրբութեան մակագրութեամբ թոյլ տրուեց Երեւանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսին կարգադրել թաղել Առաջաձոր գիւղի եկեղեցու գաւթում հանգուցեալ գթութեան քոյր՝ Վարսենիկ Մելիք-Ստեփանեանի դիակը։ 27 նոյեմբ., թ. 2145։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Աստրախանի թեմի Աջանասելլի–Պոսաքի գիւղի Շմաւոն քահ. Գարաքեհեանի փոխադրած տասն (10) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 նոյեմբերի, թ. 2147։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Շուշու Ռէալական դպրոցի հայ աշակերտների եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի փոխադրած մի հարիւր յիսուն 150) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 30 նոյեմբ., թ. 2149։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Կերչ քաղաքի Ղեւոնդ քահանայ Այտընեանի անունով, որով, համաձայն Նոր-Նախիջեւանի և Բեսարաբիայի թեմական Առաջնորդի միջնորդութեան, կամիլաւկա կրելու իրաւունք շնորհուեց։ 6 հոկտեմբերի, թ. 1706։

Կոնդակ Պարսկաստանի Մարաղա քաղաքի Գարեգին քահանայ Պետրոսեանի անունով, որով, համաձայն թեմի Առաջնորդի միջնորդութեան, քահանայական յանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 14 հոկտեմբերի, թ. 1772։

Կոնդակ Արմաւրի Հայոց գործակալ Տ. Գաբրիէլ քահանայ Թուելեանի անունով, որով, թեմական Առաջնորդի միջնորդութեան համաձայն, աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց։ 26 հոկտեմբերի, թ. 1867։

Կոնդակ Աքքերման քաղաքի Երեմիա քահանայ Ապրիլեանի անունով, որով, համաձայն Նոր-Նախիջևանի և Ռեսսարաբիայի թեմական Առաջնորդի միջնորդութեան, «կամիլաւկա» գլխարկ կրելու իրաւունք շնորհուեց։ 24 Նոյեմբերի, թ. 2108։

ԳԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինօդը՝ լսելով Ատրպատականի Կոնսիստորիայի 1914 թ. գեկտ. 11-ի № 4184 յայտարարութիւնը—Կրանովոդակի Գարեգին քահանայ Ասրեանի և իւր ծխականների մէջ ծագած գժտութիւնների մասին, որոշեց. ի նկատի ունենալով, որ Կրանովոդակի հովիւ Ասրեան քահանայի այնտեղ մնալը դառել է անհնարին, և իրականապէս Ասրեանն այժմ հեռացել է Կրանովոդակից ու ապրում է ուրիշ քաղաքում, ուստի համարել Գարեգին քահանայ Ասրեանին արձակուած Կրանովոդակի ծխական քահանայի պաշտօնից և առաջադրել Ատրպատականի Կոնսիստորիային կարգադրել նոր քահանայ ընտրել տալ Կրանովոդակի համայնքի համար։ 2 Նոյեմբերի, թ. 404։

Սինօդը՝ լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի 1914 թ. հոկտ. 30-ի № 2995 յայտարարութիւնը—Սեղրաք Տէր Դանիէլեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. համաձայն նորին Սրբութեան մակագրութեան թոյլ տալ Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունելու Շուշու գաւառի Փիրջամալ գիւղի բնակիչ Սեղրաք Տէր Դանիէլեանցին և ի նկատի ունենալով, որ թեմում եպիսկոպոս չկայ՝ յանձնել Մ. Աթոռի միարան Տ. Բագրատ